



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» սեպտեմբերի 2022թ. 142-Ե

ք. Երևան

ԱՐԱԳԱԾԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՈՒՏՔԸ ԵՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Կանոնադրության 4-րդ գլխի 22-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի Հ/Հ 08/7942-2022 առ 23.05.2022թ. գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի սեպտեմբերի 22-ից հաստատել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությանը պատկանող Արագածի գիտական կենտրոնի մուտքի վճարների և տարածքում նկարահանումներ իրականացնելու գնացուցակը:
2. Մուտքավճարները և նկարահանումների գնացուցակը սահմանել ըստ հավելված 1-ի:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող տեղակալին:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Ստանդարտացման և չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ տնօրենի

« 22 » « 09 » 2022թ.

№ 142-Ը հրամանի

ԱՐԱԳԱԾԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ և ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ

ՀՀ քաղաքացիների մուտքավճարը.

- Մինչև 7 տարեկան – անվճար,
- 7 տարեկանից բարձր՝
 - Մեկանգամյա մուտքավճար – 1200 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/,
 - Շաբաթվա համար նախատեսվող մուտքավճար – 5500 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/,

Օտարերկրյա քաղաքացիների մուտքավճարը.

- Մինչև 7 տարեկան – անվճար,
- 7-ից տարեկանից բարձր՝
 - Մեկանգամյա մուտքավճար – 1500 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/,

Նկարահանումների գնացուցակը.

- Հարսանեկան նկարահանման նպատակով – 45 000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/,
- Ֆիլմերի և տեսահոլովակների նկարահանման նպատակով՝ 1 օրը – 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/, երկարաժամկետ նկարահանումների դեպքում՝ պայմանագրային,
- Լուսանկարահանման նպատակով՝ 1 անձի մեկ այցը – 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/, երկարաժամկետ լուսանկարահանումների դեպքում՝ պայմանագրային:

- Ոլորտի մասնագիտական ունակություններով և համապատասխան փորձառություն ունեցող անձի ուղեկցություն՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/:

Հ.Գ. Արագածի գիտական կենտրոնի այցելուներին, առանց բացառության, չի թույլատրվում մուտք գործել ռադիո-օպտիկական աստղադիտակի հարավային թունելի և թասի ներսի հատված՝ անվտանգության պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Գիտական կենտրոնի տարածք մտնելիս և տարածքում գտնվելիս այցելուներին ուղեկցում են «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության պահակային ծառայության աշխատակիցները: